ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"09" սեպտեմբերի 2026թ. N 2403-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի ԹԻՎ 19 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի 6-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի և 20-րդ կետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2026 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 19 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

9/9/2026

X

ՔՐԻՍՏԻՆԵ ՂԱԼԵՉՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Signed by: GHALECHYAN KRISTINE 5504770076 **Ք. ՂԱԼԵՉՅԱՆ**

ք.Երևան

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
« » _____ 2026թ.
N _____ հրամանի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի նիստի

ք. Երևան

04.09.2026թ.

2026թ. սեպտեմբերի 4-ին ժամը 11:00-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մրցութային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի	
նախագահ՝	Դ. Իվանյանը
քարտուղար՝	Պ. Գալստյանը
անդամներ՝	Ա. Խաչատրյանը
	Կ. Մկրտչյանը

Օրակարգում՝

1. «Երկու Ընկեր» ՍՊ ընկերության «Արմավիր-Երևան» թիվ 207 միջմարզային երթուղու ավտոտրանսպորտային միջոցը նորով փոխարինելու մասին գրությունը:
2. ԱՁ Գագիկ Դավթյանի «Երևան-Իջևան» թիվ 654 միջմարզային երթուղու ավտոտրանսպորտային միջոցները նորով փոխարինելու մասին գրությունը:
3. «Մուլտի Տրանսպորտ» ՍՊ ընկերության «Կոտայքի մարզի միասնական երթուղային ցանցը» նոր ավտոտրանսպորտային միջոցներով համալրելու գրությունը:

Քննարկվեց

1. «Երկու Ընկեր» ՍՊ ընկերության «Արմավիր-Երևան» թիվ 207 միջմարզային երթուղու ավտոտրանսպորտային միջոցը նորով փոխարինելու հարցը:

2. ԱՁ «Գագիկ Դավթյանի» «Երևան-Իջևան» թիվ 654 միջմարզային երթուղու ավտոտրանսպորտային միջոցները նորով փոխարինելու հարցը:
3. «Մուլտի Տրանսպորտ» ՍՊ ընկերության «Կոտայքի մարզի միասնական երթուղային ցանցը» նոր ավտոտրանսպորտային միջոցներով համալրելու հարցը:

Որոշվեց՝

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի և ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշման պահանջներով՝

1. Թույլատրել «Երկու Ընկեր» ՍՊ ընկերությանը «Արմավիր-Երևան» թիվ 207 միջմարզային երթուղում շահագործվող «Գազ» մակնիշի 4469L հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցը փոխարինել «Հյունդայի» մակնիշի 602 HT 61 հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցով:
1. Չթույլատրել ԱՁ Գագիկ Դավթյանի «Երևան-Իջևան» թիվ 654 միջմարզային երթուղում շահագործվող «Գազ» մակնիշի 4453L հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցը փոխարինել «Մերսեդես Բենց» մակնիշի 57 DD 500հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցով, իսկ «Գազ» մակնիշի 3860L հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցը փոխարինել «Գազ 32212» մակնիշի 37 WG 941 հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցով՝ համաձայն Կարգի 44-րդ կետի:
2. Թույլատրել «Մուլտի Տրանսպորտ» ՍՊ ընկերությանը «Կոտայքի մարզի միասնական երթուղային ցանցը» համալրել «Ջաք HFC6601EHV» մակնիշի 056 DG 61 հաշվառման համարանիշի, «Յութոնգ» մակնիշի 671 CN 61 և 672 CN 61 հաշվառման համարանիշերի ավտոտրանսպորտային միջոցներով:

Մրցութային հանձնաժողովի

նախագահ՝ Դ. Իվանյան

քարտուղար՝ Պ. Գալստյան

անդամներ՝ Ա. Խաչատրյան

Կ. Մկրտչյան